GRETA GURURYAN
Economics, Bachelor's Degree, 3rd Year

THE PROBLEMS OF TOURISM AND THE WAYS OF THEIR SOLUTION IN THE REPUBLIC OF ARMENIA IN THE POST-COVID PERIOD

Key words: *tourism, branch of economy, competitiveness, tourism infrastructure*

Nowadays tourism is considered one of the continually developing sectors of the world economy. Armenia is an attractive tourist destination with great development potential.The article examines and analyzes the current state of the tourism sector in the Republic of Armenia, the impact of Covid-19 and the country's current situation on tourism. Contemproary challenges of tourism are presented and possible solutions to these problems are suggested.

ԳԵՂԵՑԻԿ ԴԱԼԼԱՔՅԱՆ
Վիճակագրություն,
բակալավրիատ, 4-րդ կուրս

«ՓԱՓՈՒԿ ՈՒԺ». ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հիմնաբառեր. *«փափուկ ուժ», «կոշտ ուժ», գործոնային վերլուծություն, համաթիվ*

Միջազգային հարաբերություններում առաջնային դիրք ունենալու համար երկրները կիրառում են բազմաթիվ գործիքակազմեր, որոնց մեջ իր կարևոր տեղն ունի «փափուկ ուժը»: Սույն հոդվածում առանձնացվել են «փափուկ ուժի» վրա առավել մեծ ազդեցություն ունեցող բաղադրիչները, որոնց հիման վրա կատարվել է գործոնային վերլուծություն: Վերլուծության արդյունքում աշխարհի 137 երկրների համար հաշվարկվել է 1 ընդհանրական համաթիվ, որը հնարավորություն է տալիս գնահատելու «փափուկ» ուժի ներուժը: Կատարվել է նաև երկրների վարկանշավորում, որն ակնհայտորեն առանձնացնում է «փափուկ ուժով» առաջատար երկրները:

Ներածություն: Վերջին ժամանակներում շատ երկրներ ձգտում են պահպանել իրենց գոյությունը փոփոխվող աշխարհում և այդ նպատակով փորձում են օգտագործել «փափուկ ուժի» ռեսուրսները: Տարբեր երկրներ տարբեր ձևով են կիրառում «փափուկ ուժը», որն ունի նաև դժվարություններ՝ կապված կառավարման և վերահսկողության հետ: Թյուր կարծիք կա, որ «փափուկ ուժի» կիրառման մեջ կարող են հաջողությունների հասնել միայն տնտեսապես զարգացած պետությունները: Փորձը ցույց է տալիս, որ այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ռուսաստանը, Ղազախստանը և Թուրքիան, «փափուկ ուժի» կիրառման հարցում իրենց տեղը զիջում են Իռլանդիային, Իսրայելին և Լեհաստանին, որոնք գլխավորում են «փափուկ ուժը» արդյունավետ կիրառող երկրների ցուցակը: Պատճառներից մեկն այն է, որ շատ երկրներ փորձում են կրկնօրինակել այլ երկրների փորձը՝ հաշվի չառնելով իրենց երկրի տնտեսական, մշակութային, պատմական և մի շարք այլ առանձնահատկություններ: Սակայն պետք չէ նաև հույսը դնել միայն սեփական քաղաքական, տնտեսական և ֆինանսական հնարավորությունների վրա:

Գրականության ակնարկ: «Փափուկ ուժ» հասկացությունը գործածվում է 1980-ականների վերջից՝ Ջոզեֆ Նայի կողմից: The Future of Power (2011) աշխատության մեջ Նայը նշում է, որ «փափուկ ուժը» նկարագրական, այլ ոչ թե նորմատիվ հասկացություն է[1], հետևաբար կարող է օգտագործվել ոչ լավ նպատակների համար:

«Փափուկ ուժը», որպես անարդյունավետ միջոց, քննադատության է ենթարկվել այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսին է, օրինակ, Նայլ Ֆերգյուսոնը: Նեոռեալիստ և այլ ռացիոնալիստ ու նեոռացիոնալիստ հեղինակներ (բացառությամբ Սթիվեն Ուոլթի) «փափուկ ուժը» համարում են անձեռնմխելի՝ պնդելով, որ միջազգային հարաբերությունների դերակատարներն արձագանքում են միայն երկու տեսակի խթանների՝ տնտեսական խթանի և «կոշտ» ուժի:

Որպես հայեցակարգ՝ դժվար է տարբերակել, թե որն է «փափուկ ուժը», որը՝ «կոշտ»: Օրինակ, Ջենիս Բիալի Մեթերնը պնդում է, որ Ջորջ Բուշի կողմից «Դուք կա՛մ մեզ հետ եք, կա՛մ ահաբեկիչների հետ» արտահայտությունն իրականում «կոշտ ուժի» դրսևորում էր: Այս տեսակի ուժը սպառնում է իր «գործընկերների» հեղինակությանը՝ ստիպելով նրանց ենթարկվել կամ պիտակավորվել որպես «չարագործ»: Հետևաբար, հեղինակի կարծիքով, «փափուկ ուժը» այնքան էլ փափուկ չէ[2]:

Մեթոդաբանություն: «Փափուկ ուժի» ռեսուրսները բազմազան են և, ըստ երկրների, բավականին տարբերվում են, ուստի անհրաժեշտություն է առաջանում «փափուկ ուժի» ռեսուրսներն ընդհանրացնել մեկ միասնական կամ մի քանի խմբային ցուցիչներում, որոնք էլ, ըստ էության, կհանդիսանան «փափուկ ուժի» ներուժի գնահատականներ: Ակնհայտ իրողություն է, որ «փափուկ ուժի» ռեսուրսներն ունեն տարբեր աստիճանի կարևորություն: Այս առումով կարևոր նշանակություն է ստանում «փափուկ ուժի» ներուժի այնպիսի ընդհանրական գնահատականը, որի բաղադրիչները կունենան իրենց հարաբերական կարևորությունից բխող տեսակարար կշիռներ:

Ուստի, մեր կողմից ներկայացվել է «փափուկ ուժի» ներուժի գնահատման ընդհանրական համաթվի ձևավորման մեթոդաբանություն, որի հիմքում տեսակարար կշիռների որոշումն է՝ ելնելով բաղադրիչների հարաբերական կարևորությունից: Նման մոտեցումը հնարավորություն կտա ստանալու «փափուկ ուժի» ներուժի համակողմանի գնահատական՝ այդ ուղղությամբ նպատակային քաղաքականության իրականացման համար:

Նկարագրված խնդրի լուծման լուրջ ներուժ է պարունակում գործոնային վերլուծությունը: Մասնավորապես, գործոնային վերլուծության մեթոդը հնարավորություն է տալիս իրականացնելու «փափուկ ուժի» ռեսուրսների ընդհանրացում միասնական գնահատականի շրջանակներում՝ հաշվի առնելով բաղադրիչ ցուցանիշներից յուրաքանչյուրի հարաբերական կարևորությունը:

Հետազոտվող խնդրի շրջանակներում կարևորագույն տեղեկատվություն են պարունակում գործոնային վերլուծության ընդհանրությունների ցուցանիշները: Դրանք ցույց են տալիս, թե վերլուծության մեջ դիտարկվող ելակետային ցուցանիշի դիսպերսիայի որ մասն է բացատրվում առաջարկվող ցուցանիշների համախմբությամբ: Հետևապես, ինչքան բարձր է դրա արժեքը, այնքան

---

[1] Տե՛ս **Nye Joseph,** The Future of Power: New York: PublicAffairs, 2011:

[2] Տե՛ս **Mattern Janice Bially**, Why 'Soft Power' Isn't So Soft: Millennium: Journal of International Studies. 33, 2005:

դրան համապատասխանող ցուցանիշը մեծ դերակատարում ունի գործոնային համակարգի ձևավորման մեջ: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ընդհանրությունների ցուցանիշների աղյուսակի արժեքները կարելի է օգտագործել «փափուկ ուժի» ներուժի ընդհանրական համաթվի բաղադրիչ ցուցանիշների կարևորությունն արտացոլող կշռային գործակիցները ստանալու համար: Այսպես, ընդհանրությունների ցուցանիշների արժեքները նորմավորելով այնպես, որ դրանց գումարը հավասար լինի 1-ի, կունենանք դիտարկվող ցուցանիշներից յուրաքանչյուրի հարաբերական կարևորությունից բխող կշռային գործակիցներ: Ստացված կշռային գործակիցների և «փափուկ ուժի» ռեսուրսների արժեքների հիման վրա էլ կարող ենք դուրս բերել դրա ներուժի ընդհանրական գնահատականը:

Ներկայացված մոտեցման հիման վրա հաշվարկել ենք «փափուկ ուժի» ներուժի ընդհանրական համաթիվը և գնահատել 137 երկրների ներուժի արդյունքները:

Գործոնային վերլուծությունը կատարվել է Բերթելսման հիմնադրամի վերափոխումների ընդհանրական գնահատականի՝ 137 երկրների 17 բաղադրիչների արժեքների հիման վրա.

- պետականություն,
- քաղաքական մասնակցություն,
- իրավունքի գերակայություն,
- ժողովրդավարական ինստիտուտների կայունություն,
- քաղաքական և սոցիալական ինտեգրում,
- սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ,
- շուկա և մրցակցություն,
- արժութային և գնային կայունություն,
- սեփականության իրավունքի պաշտպանություն,
- բարեկեցության մակարդակ,
- տնտեսության նկարագիր,
- կայունություն,
- վերափոխումների կառավարման բարդության աստիճան,
- կառավարման ներուժ,
- ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- համաձայնության ձեռքբերում,
- միջազգային համագործակցություն:

Այս ցուցանիշների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Բերթելսման հիմնադրամի վերափոխումների համաթվերի բաղադրիչները, մեր կարծիքով, տնտեսական և կառավարման ոլորտներում իրականացրած բարեփոխումների առավել համալիր և համակողմանի գնահատականներ են: Դրանք ընդգրկում են վերափոխումների տարբեր ուղղություններ՝ հաշվի առնելով ինչպես արտաքին առևտրի ազատականացումը, ազատ մրցակցությունը, սոցիալական, ինստիտուցիոնալ բարեփոխումները, այնպես էլ վերափոխումների կառավարման արդյունավետությունը, կառավարության կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, կառավարման ներուժը, վերափոխումների քաղաքականության գերակայությունները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Ստորև ներկայացված աղյուսակներում ամփոփված են գործոնային վերլուծության արդյունքները՝ ստացված SPSS ծրագրային փաթեթի կիրառմամբ:

Հատկանշական է, որ ընդհանրությունների ամենամեծ արժեքը գրանցվել է *քաղաքական մասնակցություն* ելակետային ցուցանիշի դեպքում, որը կազմել է 0.943: Սա նշանակում է, որ *քաղաքական մասնակցություն* ցուցանիշի վարիացիայի 94.3%-ը նկարագրվում է կառուցված մոդելի շրջանակներում:

Ընդհանուր առմամբ, մեր կողմից դիտարկվող զարգացող տնտեսությամբ երկրներում վերափոխումների ցուցանիշների համակարգում լատենտային բնութագրիչների դուրսբերման համար առավել կարևոր նշանակություն ունեն *քաղաքական մասնակցություն, իրավունքի գերակայություն, ժողովրդավարական ինստիտուտների կայունություն, համաձայնությունների ձեռքբերում* ցուցանիշները:

Աղյուսակ 1

Ընդհանրություններ[1]

Ցուցանիշ	*Սկզբնական*	*Արտածում*
Պետականություն	1.00	.646
Քաղաքական մասնակցություն	1.00	.943
Օրենքի գերակայություն	1.00	.938
Ժողովրդավարական ինստիտուտների կայունություն	1.00	.939
Քաղաքական և սոցիալական ինտեգրում	1.00	.884
Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ	1.00	.864
Շուկայի կազմակերպում և մրցակցություն	1.00	.874
Դրամավարկային և հարկաբյուջետային կայունություն	1.00	.803
Մասնավոր սեփականություն	1.00	.854
Բարեկեցության մակարդակ	1.00	.920
Տնտեսության նկարագիր	1.00	.665
Կայունություն	1.00	.895
Վերափոխումների կառավարման բարդության աստիճան	1.00	.845
Կառավարման ներուժ	1.00	.895
Ռեսուրսների արդյունավետ օգտագործում	1.00	.866
Համաձայնության ձեռքբերում	1.00	.933
Միջազգային համագործակցություն	1.00	.798

Աղյուսակ 1-ի տվյալները ցույց են տալիս, որ վերլուծության մեջ ընդգրկված ցուցանիշների գերակշիռ մասը էական դերակատարում ունի ձևավորված գործոնային համակարգում: Ուշագրավ է, որ այս առումով բացառություն են կազմում *պետականություն և տնտեսության նկարագիր* ցուցանիշները, որոնց տատանումները նկարագրվում են համապատասխանաբար 64.6 և 66.5%-ի չափով: Թեև դրանց նշանակալիությունն անտեսելու համար այդ ցուցանիշների արժեքները ցածր չեն, այնուամենայնիվ, նկատելիորեն զիջում են մյուս ցուցանիշներին:

Գործոնային վերլուծության կարևորագույն արդյունքներ է պարունակվում նաև բացատրված վարիացիայի աղյուսակը: Այստեղ ներկայացված են յուրաքանչյուր բաղադրիչին համապատասխան սեփական արժեքները, բացատրվող վարիացիայի տոկոսը, գումարային վարիացիան, ինչը հնարավորություն է տալիս որոշելու գլխավոր բաղադրիչների թիվը:

Աղյուսակ 2-ից նկատելի է, որ միայն մեկ բաղադրիչի պարագայում է սեփական արժեքը մեծ 1-ից, նաև այն, որ հենց այդ բաղադրիչն է նկարագրում

[1] Այս և մյուս աղյուսակներում ամփոփված են հեղինակի կողմից կատարված գործոնային վերլուծության արդյունքները՝ ըստ Բերթելսման հիմնադրամի https://www.bti-project.org/en/index/ տվյալների՝ SPSS փաթեթի կիրառմամբ:

ընդհանուր վարիացիայի շուրջ 76%-ը: Հետևաբար, ցուցանիշների նկարագրված կազմի չափողականությունը հնարավոր է նվազեցնել ընդհուպ մինչև 1-ը, այսինքն՝ արդարացված և հիմնավորված 17 ցուցանիշների ընդհանրացումը մեկի մեջ:

Աղյուսակ 2

Գործոնային վերլուծության արդյունքները. բացատրված ընդհանուր վարիացիան

Բաղադրիչը	Սեփական արժեքներ		
	Ընդամենը	Վարիացիա,%	Կուտակային տոկոս,%
1	12.844	75.552	75.552
2	.719	7.111	82.663
3	.662	6.893	89.556
4	.451	2.651	92.207
5	.295	1.733	93.940
6	.222	1.303	95.243
7	.128	.756	95.999
8	.113	.664	96.663
9	.107	.629	97.292
10	.094	.553	97.845
11	.084	.496	98.341
12	.072	.425	98.766
13	.056	.328	99.094
14	.051	.303	99.397
15	.046	.270	99.667
16	.032	.188	99.855
17	.025	.145	100.000

Ընդհանրական ցուցիչի բաղադրիչների հարաբերական կարևորության գնահատականների դուրսբերումը կատարվել է ընդհանրությունների ցուցանիշի հիման վրա, որոնց ձևափոխությունների արդյունքում ստացվել են ստորև ներկայացված աղյուսակում բերված գործակիցները:

Աղյուսակ 3

«Փափուկ ուժի» ներուժի ընդհանրական ցուցանիշի բաղադրիչների հարաբերական կարևորությունն արտացոլող կշռային գործակիցները

Բաղադրիչ	Կշիռ
Պետականություն	0.044
Քաղաքական մասնակցություն	0.065
Օրենքի գերակայություն	0.064
Ժողովրդավարական ինստիտուտների կայունություն	0.064
Քաղաքական և սոցիալական ինտեգրում	0.061
Սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակ	0.059
Շուկայի կազմակերպում և մրցակցություն	0.060
Դրամավարկային և հարկաբյուջետային կայունություն	0.055
Մասնավոր սեփականություն	0.059
Բարեկեցության մակարդակ	0.063
Տնտեսության նկարագիր	0.046
Կայունություն	0.061
Վերափոխումների կառավարման բարդության աստիճան	0.058
Կառավարման ներուժ	0.061
Ռեսուրսների արդյունավետ օգտագործում	0.059
Համաձայնության ձեռքբերում	0.064
Միջազգային համագործակցություն	0.055

Աղյուսակ 3-ում ամփոփված կշռային գործակիցների և համապատասխան ելակետային ցուցանիշների արժեքների արտադրյալը հանրագումարի բերելով՝ ստացել ենք «փափուկ ուժի» ներուժի ընդհանրական համաթիվ, ըստ որի՝ իրականացրել ենք երկրների վարկանշավորում:



Գծապատկեր 1. ***ՀՀ ընդհանրական համաթիվը՝ համեմատած 10 լավագույն և 10 ամենացածր արժեքների հետ***[1]

Եզրակացություն: Ստացված արդյունքների համաձայն՝ հետազոտվող երկրների շարքում «փափուկ ուժի» ներուժի ընդհանրական համաթվով առաջատարն Էստոնիան է: Մեծ ներուժ կա նաև Թայվանում, Չեխիայում, Լիտվայում, Ուրուգվայում, Սլովենիայում, Չիլիում, Լատվիայում, Հարավային Կորեայում, Սլովակիայում: Հատկանշական է, որ վարկանշային աղյուսակում ցածր տեղ են զբաղեցնում հիմնականում աֆրիկյան երկրները, ինչպես նաև Տաջիկստանը, Թուրքմենստանը, Վենեսուելան և այլն:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա 137 երկրների շարքում այն զբաղեցնում է 40-րդ տեղը՝ ընդհանրական համաթվի 6.31 ցուցանիշով: Ընդ որում, «փափուկ ուժի» ներուժի համեմատաբար բարձր մակարդակը հիմնականում պայմանավորված է ժողովրդավարական ինստիտուտների կայունության, քաղաքական մասնակցության, համաձայնության ձեռքբերման և քաղաքական ու սոցիալական ինտեգրման ցուցանիշների մակարդակով, որոնք, ըստ Բերթելսման հիմնադրամի տվյալների, 0-10 միջակայքում գնահատվում են համապատասխանաբար 6.5, 8.3, 6.8, 6.0 արժեքներով:

Այսպիսով, մեր կողմից մշակված մեթոդական մոտեցման կիրառումը հնարավորություն է տալիս իրականացնելու «փափուկ ուժի» ներուժի համակողմանի գնահատում ընդհանրական համաթվի միջոցով: Նկարագրված մեթոդական մոտեցման կարևորագույն առանձնահատկությունը գործոնային վերլուծության արդյունքում, համաթվի բաղադրիչների հարաբերական կարևորությունից ելնելով, տեսակարար կշիռների որոշումն է: Այն հետազոտական լայն տիրույթ է ապահովում «փափուկ ուժի» ներուժի քանակական գնահատման, համեմատական վերլուծության և քաղաքականության խորացման հնարավորությունների բացահայտման համար:

[1] Գծապատկերը կառուցել է հեղինակը՝ վերլուծության արդյունքների հիման վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Daryl Copeland. Hard Power Vs., Soft Power, Feb 2, 2010.
2. Nye Joseph, Soft power: The Means to Success in World Politics, 2004.
3. Nye Joseph, The Future of Power, 2011.
4. www.bti-project.org

ГЕГЕЦИК ДАЛЛАКЯН
Статистика, бакалавриат, 4-й курс

«МЯГКАЯ СИЛА»: ОЦЕНКА ПОТЕНЦИАЛА

Ключевые слова: *мягкая сила, жесткая сила, факторный анализ, сотрудничество*

Для того, чтобы занять лидирующие позиции в международных отношениях, страны используют ряд факторов, включая «мягкую силу». В данной статье выделены компоненты, оказывающие наибольшее влияние на потенциал «мягкой силы», на основании чего был проведен факторный анализ. В результате анализа был рассчитан 1 общий индекс для 137 стран мира, позволяющий оценить потенциал «мягкой силы». Также был составлен рейтинг стран, в котором четко выделяются страны-лидеры с «мягкой силой».

GEGHETSIK DALLAKYAN
Statistics, Bachelor's Degree, 4rd Year

SOFT POWER: THE ASSESSMENT OF POTENTIAL

Key words: *soft power, hard power, factor analysis, co*

Countries use a number of tools to have a leading role in international relations. And soft power is among these components. In this article, the components that have the greatest impact on the soft power potential are identified. Based on which a factor analysis has been performed. As a result of the analysis, 1 general index was calculated for 137 countries of the world, which allows us to assess the potential of soft power. A ranking of countries has also been performed, which clearly distinguishes the leading countries in soft power.

ՄԱՐԻ ԵՐԻՑՅԱՆ
Կառավարում,
բակալավրիատ, 4-րդ կուրս

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *տեղական ինքնակառավարում (ՏԻ), ծրագրային բյուջետավորում (ԾԲ), համայնք, բյուջե, համայնքի հնգամյա զարգացման ծրագիր (ՀՀՀԶԾ), տարեկան աշխատանքային պլան (ՏԱՊ)*

Տեղական ինքնակառավարման համակարգը ՀՀ-ում իրականացվում է ապակենտրոնացված: Վերջինս ենթադրում է իշխանական լիազորությունների փոխանցում կառավարման համակարգի մաս չկազմող, իշխանական լիազորություններով օժտված այլ մարմինների, որոնք ազատ և անկաշկանդ են գործում, իսկ այդ գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարող է կրել միայն իրավական բնույթ: Ըստ «Տեղա-